

Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ
WWW.SOURPHAGOP.ORG (26-րդ տարի)

Այս թիւով.....

Փետրուար 2026 (ԼԳ տարի թիւ 6)

Փետրուար ամսուան բացատրական
տօնացոյց Էջ 2-4, 7

Տեառնընդառաջ

Ղեւոնդեանք

Նորահրաշ՝ Ս. Վարդանանց շարական

Ս. Ոսկեանց քահանաները

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Սուրբ
Եկեղեցւոյ Պատարագին Էջ 5-7

Ս. Սահակ Պարթեւ Էջ 8

Մեծ Պահքի 7 Կիրակիները Էջ 9,10

Մանուկներու եւ Պատանիներու Մեծ
Պահքի Օրացոյց Էջ 11,12

Ո՞րն է ճիշդ պատասխանը Էջ 13-16

Լուրեր Կիրակնօրեայէն Էջ 17-19

Ամէն օր Վարդանանց է Էջ 20



Վ...Վարդանանք

Խաչքարի Հեղինակ Ժողովրդական Վարպետ,
Ռուբեն Նալբանդյան

Քանզի Հայր Մեր զՍուրբ
Աւետարանն Գիտեմք եւ
Մայր զԱռաքելական Եկեղեցի
Կաթուղիկէ:

Ամսուան Համարը

«Ո՞վ կրնայ, ուրեմն, մեզ բաժնել Քրիստոսի սերէն. նեղութի՞ւնը, անձկութի՞ւնը,
հալածա՞նքը, սո՞վը, մերկութի՞ւնը, վտա՞նգը, կամ սո՞ւրբ»: Հռոմայեցիներուն 7.35

Հաւատք

Կրօն

Եկեղեցի

Լեզու

Մշակոյթ

Փետրուար ամսուան բացատրական տօնացոյց


Բշ. 2	Սրբոց Ատովմեանց զօրավարացն
Գշ. 3	Սրբոց Սուքիասանց վկայիցն
Եշ. 5	Սրբոց Ոսկեանց Քահանայիցն
Շրթ. 7	Սրբոյն Իսահակայ Պարթևի Հայրապետին մերոյ
Գշ. 10	Սրբոց Ղեւոնդեանց Քահանայիցն
Եշ. 12	Սրբոց Վարդանանց Ջօրավարացն մերոյ հազար երեսուն եւ վեց վկայիցն
Շրթ. 14	ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն:
Կիր. 15	Բուն Բարեկենդան
Բշ. 16	Ա. օր Մեծ Պահքի
Շրթ. 21	Սուրբ Թէոդորոս Ջօրավար
Կիր. 22	Մեծ Պահքի Բ. Կիրակի Արտաքսման

Պահք 1,2,3,8, 10, 15, 17, 20- 31

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Հայաստանեայց Եկեղեցւոյ տէրունի տօներէն մէկն է: Ան յիշատակն է 40 օրուայ մանուկ Յիսուսի տաճար բերուելուն ու Աստուծոյ ընծայուելուն: Տեառնընդառաջը անշարժ տօն մըն է, եւ ամէն տարի զայն կը տօնենք Սուրբ Ծնունդէն 40 օրեր ետք, Փետրուար 14-ին:

Տեառնընդառաջի օրը, եկեղեցիէն ներս Ս. Պատարագ կը մատուցուի, եկեղեցիին 4 անկիւնները կը կարդացուին առիթին համապատասխանող հատուածներ: Կը յիշատակուին նաեւ ծերունի Սիմոնն ու Աննա մարգարէուհին, որոնք Յիսուսի տաճար ընծայման ներկայ գտնուեցան:



Գիտէի՞ր թէ ...

Տեառնընդառաջի մասին կարելի է կարդալ միայն Ղուկասի աւետարանին մէջ:

Ի՞նչ կը տօնենք Փետրուար 14-ին

Երբ մեր շուրջը St. Valentine կը տօնուի, մենք պէտք է յիշենք թէ Հայ Եկեղեցին այդ օրը Տեառնընդառաջ կը տօնէ: Տեառնընդառաջը, 40 օրուայ Յիսուս Մանուկին տաճար տարուելու եւ Աստուծոյ նուիրուելու օրն է: Նախորդող գիշերը, 13-ին, եկեղեցւոյ մէջ արարողութիւն տեղի կ'ունենայ, կրակ կը վառեն եկեղեցւոյ բակին մէջ ու հաւատացեալներ իրենց մոմերը վառելով տուն կը տանին:



ՂԵՒՈՆՂԵԱՆՔ

Յովսէփ կաթողիկոս, Սահակ եւ Թաթիկ եպիսկոպոսներ, Ղեւոնդ, Մուշէ, Արշէն, Սամուէլ քահանաներ, Քաջաջ եւ Աբրահամ սարկաւազներ եւ այլ հոգեւորականներ Ղեւոնդեանք անուան տակ կը ճանչցուին:

Ղեւոնդեանք քահանայից տօնը ընդհանրապէս կը տօնուի Վարդանանց տօնի նախորդող Երեքշաբթի օրը, որ նաեւ տօնն է բոլոր քահանաներուն:

Պարսից Յազկերտ Բ. թագաւորը, Վարդանանց պատերազմէն ետք, Հայաստանի մէջ ապստամբական նոր խլրտումներ կանխարգիլելու համար, կարգ մը կասկածելի նախարարներու հետ հոգեւորականներն ալ արգելափակեց:



454-ի Քուշանաց ղեմպատերազմի պարտութենէն ետք, Յազկերտ թագաւորը արգելափակուածներէն իւրաքանչիւրը տարբեր ձեւով սպաննեց: Ղեւոնդեանք հայ եկեղեցականութեան պարծանք ներշնչող սուրբերն են: Հայրենիքի եւ հաւատքի նկատմամբ նուիրումի գաղափարը Ղեւոնդեանք տուին իրենց անձնական օրինակով:

Կիրակնօրեան Բուն
Բարեկենդան կը տօնէ
Կիրակի՝ 15 Փետրուար
Ժամը 10:30 - 1:00:

Նախակրթարանի աշակերտներուն
համար նախընտրաբար Հայկական
տարազներով ծպտուիլը անհրաժեշտ է:

Նորահրաշ՝ Ս. Վարդանանց շարական



Հայաստանեայց եկեղեցին այս տարի Փետրուար 12-ին կը տօնէ Վարդանանց պատերազմի յիշատակը: Պատերազմի պատմականն ու իրողութիւնները բոլորին ծանօթ են: Պարսիկներու Յագկերտ թագաւորին ուղղուած պատասխան-նամակին հետեւեալ եզրափակումը ազդու եւ գեղեցիկ ոճով կ'ամփոփէ կացութիւնը:

«Այս հաւատքէն մեզ ոչ ոք չի՝ կրնար խախտել, ոչ հրեշտակները եւ ոչ մարդիկ, ոչ սուրը եւ ոչ հուրը, ոչ ջուրը եւ ոչ ալ ոեւէ այլ դառն հարուած...»:

Ազգայնակրօնական բնոյթ ունեցող այս տօնը Հայաստանեայց եկեղեցւոյ ամենէն շատ ժողովրդականութիւն ունեցող տօներէն մէկն է, որուն հերոս-գորավարները, իրենց յանձն առած զոհողութիւններուն եւ անխախտ հաւատքին ու յանդգնութեան շնորհիւ սուրբերու կարգին անցած են, եւ այլ սուրբերու նման, անոնց փառքը հիւսուած է շարականներու միջոցաւ:

Սրբոցն Վարդանանցի շարականներէն ամենէն աւելի ծանօթն է «Նորահրաշ Պսակաւոր»ը: Ան Սբ. Ներսէս Շնորհալիի ստեղծագործութիւններէն մէկն է, որ Վարդանանց կանոնի «Օրհնութիւն»ն է: Այլ խօսքով, Վարդանանցի տօնի առաւօտեան ժամերգութեան գլխաւոր, կեդրոնական շարականն է եւ առաջին կարգին երգուողը: «Նորահրաշ Պսակաւոր» շարականը բաղկացած է տասը (10) տուներէ եւ ան ծայրակապն է «Ներսէսի Երգ»-ին: Այսինքն եթէ այս շարականի տասը տուներու առաջին տողերէն իւրաքանչիւրին առաջին գիրերը առնելով քով-քովի գետեղենք, կը կարդանք «Ներսէսի Երգ» խօսքը: Ահաւասիկ 10 տուներու սկիզբները:

Նորահրաշ պսակաւոր և զօրագլուխ առաքինեաց,

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,

Ընական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ,

Սրբափայլ զգեստուք պճնեալք ի յերկնաւոր հանդիսադրէն,

Էական բարւոյն դիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ,

Ստացեալ զհաւատոյ վահան յուսոյն զրահիւք ծածկեալ,

Ի հոտ անոյշ ողջակիզեալ մատուցանէր զինքն նուէր,

Երկոքումբք հարազատովք ընտրելագոյն նահատակօք,

Ըամկական խումբ հազարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից,

Գոհութեամբ փառատրութիւն Երրորդութեանդ նուագեմք,...:


Գիտէի՞ր թէ

Աւարայրի ճակատամարտը տեղի ունեցաւ 451 թուականի Մայիս 26-ին, Տղմուտ գետի ափին:

Սակայն, Հայաստանեայց եկեղեցին Վարդանանցը կը յիշատակէ Բուս Բարեկենդանի նախորդող Հինգշաբթի օրը:

Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Սուրբ Պատարագին «շար. 4»

Կը շարունակենք ներկայացնել Բերիոյ թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ լուսահոգի Հոգեւոր Տեսուչ Գերշ. Ս. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրութիւն Ս. Պատարագ»ի բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկէն:



Ս. Պատարագի արարողութեան 4 մասերը.

Ինչպէս անցեալ անգամ նշեցինք, Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ.

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում

Անցեալ թիւով ներկայացուցինք «Ճաշու Պաշտօն»ը, իսկ այս թիւով պիտի ներկայացնենք «Բուն Պատարագ»ը:

3. ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳ կամ ՀԱԻԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒ ՊԱՏԱՐԱԳ

Սարկաւազը խորանէն բարձրաձայն կը յայտարարէ.

«Ո՛չ մէկ երախայ (չմկրտուած), ո՛չ մէկ թերահաւատ, ո՛չ մէկ ապաշխարութեան մէջ գտնուող եւ ոչ մէկ հոգիով ինքզինք մեղաւոր զգացող թող մօտենայ աստուածային խորհուրդին: Հաւատացեալները պատրաստ են ԲՈՒՆ ՊԱՏԱՐԱԳին:

Խորախորհուրդ պահն է, որ կը սկսի, դպիրներ երկիւղածութեամբ կ'ոգեկոչեն փրկագործ խորհուրդին ծաղկումը, կը բացայայտեն, թէ ինչպիսի վեհ եւ նուիրական խորհուրդ մըն է, որ պիտի սկսի, եւ որ պիտի սրբագործէ եկեղեցի դարձած ողջ հաւատացեալներուն համախմբումը, եւ կ'երգեն անոնք, «Մարմին Տէրունական.....»:

Ողջոյն տուողը կ'ըսէ.

- «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ»:

Ողջոյն ստացողը կը պատասխանէ.

- «Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի»:

Երախայ = չմկրտուած



«Տերունական մարմինը փրկչական արինը մեր դիմացն է: Երկնային աներեւոյթ զօրութիւններ կ'երգեն եւ անդադրում բառերով կ'ըսեն՝ սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութիւններու»:

Աւագ սարկաւազը բուրվառակիւրի ընկերակցութեամբ երկիւղածութեամբ կը մօտենայ խորհրդարանին՝ կատարելու համար վերաբերումը. բայց նախ դպիրներուն ուղղելով իր խօսքը՝ կ'ըսէ.

«Ո՛վ դպիրներ, սաղմոս ըսէք եւ քաղցրաձայն հոգեւոր երգեր երգեցէք, մեր Տիրոջ՝ Աստուծոյ.»:

Եւ դպիրները կը սկսին երգել յաւուր պատշաճի «ՄՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ»ը:

ՄՐԲԱՍԱՑՈՒԹԻՒՆ

Աւագ սարկաւազը խնկարկելէ ետք, հանդիսաւորութեամբ կ'առնէ Ս. Սկիիւր եւ խորանին ետեւէն դառնալով կը բերէ ու կը յանձնէ զայն Պատարագիչ քահանային ըսելով.

«Ո՛վ իշխաններ, բացէ՛ք ձեր դռները, թող բացուին յաւիտենականութեան դռները, որպէսզի ներս մտնէ մեծափառ թագաւորը»:

Քրիստոս որպէս երկնային թագաւոր եւ յաւիտենական Քահանայ կու գայ փառաւորապէս բազմելու Ս. Սեղանին վրայ: Կու գայ վերստին իր ուխտը կնքելու, երկինք եւ երկիր կամրջելու, կու գայ դարձեալ եւ միշտ պատարագուելու եւ մարդոց մեղքերու փրկութեան համար տալու իր Մարմինն ու Արինը:

Ս. Պատարագի ընծաները՝ ՆՇԽԱՐՆ ու ԳԻՆԻՆ Ս. Սեղանին վրայ են. պատարագիչ քահանան, որպէս մաքրութեան նշան, դարձեալ ձեռքերը կը լուայ, որովհետեւ իր մատները պիտի հալին Փրկչական Մարմնոյն եւ Արեան:

Ժողովուրդը եւս իր հոգին պէտք է ցօղուէ, որպէսզի պայծառ մտքով եւ հաւատքով, մաքուր սրտով, սրբութեամբ եւ երկիւղով ընկալէ խորհուրդը, սարկաւազը խորանէն հետեւեալ դաստիարակիչ թելադրութիւնները ժողովուրդին կ'ուղղէ.

«Հաւատքով, սրբութեամբ եւ ահով կանգնինք Աստուծոյ Սուրբ Սեղանին առջեւ: Կանգնինք առանց տարակուսանքի եւ գայթակղութեան, առանց նենգութեան եւ խորամանկութեան, առանց հիասթափութեան եւ խաբէութեան, առանց երկմտութեան եւ թերահաւատութեան, այլ ուղիղ վարմունքով, պայծառ մտքով, անխարդախ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած, ամէն տեսակի բարեգործութիւններով ճոխացած, աղօթքի կանգնինք Աստուծոյ Սուրբ Սեղանին առջեւ, որպէսզի մեր Փրկչին Յիսուս Քրիստոսի յայտնութեան եւ երկրորդ գալստեան օրը արժանանանք անոր ողորմութեան շնորհներուն»:

Աստուածային սիրոյ ճառագայթումին ներքեւ՝ հաւատացեալները կ'ըմբռնեն

Սուրբ Պատարագի ընթացքին, ուր պատուէր կայ ծնրադրելու, պատշաճ է ծնրադրել, սակայն եթէ որեւէ ֆիզիքական պատճառ կայ չծնրադրելու, յարմար է ոտքի կանգնիլ՝ յարգալից եւ գլուխը խոնարհած:

Աստուածորդուն լոյս ներկայութիւնը. Քրիստոս է՝ որ կը յայտնուի. սուրբ սեղանէն Քրիստոսի ՍԷՐը տակաւ կը տարածուի եկեղեցւոյ մէջ եւ կը համակէ ողջ հաւատացեալ ժողովուրդը:

«Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան...»

«Զիրար ողջունեցէք սուրբ համբոյրով, եւ անոնք որոնք պատրաստ չեն հաղորդուելու Աստուածային խորհուրդով, թող դուրս ելլեն եկեղեցիէն եւ գաւիթին մէջ աղօթեն»:

Սարկաւազը, Պատարագիչ քահանային ողջոյնը ստանալով, վար կ'իջնէ եւ զայն կը փոխանցէ Աւագերեցին, ըսելով.

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», այսինքն՝ Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ: Իսկ ստացող եկեղեցականը կը պատասխանէ.

«Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի»: Այսինքն՝ Օրհնեալ թող ըլլայ Քրիստոսի յայտնութիւնը:

Այսպէս ամէն մէկ հաւատացեալ, որ կը ստանայ ողջոյնը, պարտի զայն փոխանցել կողքին կեցող հաւատացեալին, միշտ կրկնելով ողջոյնի ստացման եւ փոխանակման վկայախօսութիւնը:

«Քրիստոս մեր մէջ յայտնուեցաւ, նոյն ինքն Աստուած եկեղեցւոյ մէջ բազմեցաւ:

Խաղաղութեան ձայնը հնչեց եւ Աստուծոյ ողջոյնը տարածեց:

Եկեղեցին մէկ անձ եղաւ, համբոյրը որպէս միութեան խորհրդանիշ դարձաւ:

Թշնամութիւնը հեռացաւ, ընդհանուրին վրայ սէրը սփռուեցաւ:

Արդ, ո՛վ պաշտօնեաներ, ձեր ձայները բարձրացնելով՝ միաբերան օրհներգեցէք միասնական Աստուածութիւնը, որուն սերովբէներն են որ կը սրբաբանեն»:

Սուրբ Ոսկեանց քահանաները ըստ ազգային

աւանդութեան, Հռոմի կայսեր կողմէ հայոց Սանատրուկ թագաւորի մօտ ուղարկուած 5 դէսպաններ էին, որոնք առաջին դարու կէսերուն գալով Հայաստան, կը հանդիպին Թադէոս Առաքեալին եւ անոր քարոզներէն ազդուած, կը մկրտուին՝ դառնալով քրիստոնէա: Անոնցմէ գլխաւորը՝ Խոռուսին (հայերէն՝ Ոսկի, այստեղէն ստացուած է Ոսկեանց) քահանայ կը ձեռնադրուի: Թադէոս առաքեալի նահատակութենէն ետք, Ոսկեանք կը մեկուսանան հայոց Ծաղկոտն գաւառի Ծաղկաւէտ կոչուած լեռներուն մէջ եւ շուրջ 40 տարի ճգնակեաց կեանք կը վարեն: Առաջնորդուելով աստուածային պատգամով՝ անոնք կը ներկայանան հայոց արքունիք՝ քրիստոնէութիւն քարոզելու հայոց Արտաշէս թագաւորին ու Սաթենիկ թագուհիին:

Արքունիքին մէջէն, Ոսկեաններուն կը հետեւին միայն Սաթենիկ թագուհիի ազգականները: Ալաններու երկրէն թագուհիին հետ Հայաստան եկած շուրջ 18 պալատականներ, որոնք կը մկրտուին Եփրատ գետին մէջ եւ Ոսկեաններուն հետ կը հեռանան դէպի լեռները:

Սաթենիկ թագուհիին ազգականները, որոնք կը հետեւին Ոսկեաններուն, իրենց գլխաւորի՝ Սուքիասի անունով յետագային կը կոչուին **Սուքիասեանք:**

Չյաջողելով համոզել եւ ետ վերադարձնել նախկին պալատականները՝ հայոց արքայորդիները վրէժխնդիր կ'ըլլան անոնց քարոզիչներուն՝ Ոսկեաններուն, սրախողխող ընելով զանոնք:

Ոսկեանները Հայ եկեղեցւոյ առաջին նահատակներէն ու ճգնաւորներէն են: Անոնց յիշատակութիւնը, ըստ եկեղեցական օրացոյցի կը տօնուի կամ Առաջաւորաց Պահքին յաջորդող հինգշաբթի օրը (ինչպէս այս տարի) կամ Սուքիասեանց տօնի հետ միասին:

Սուրբ Սահակ Պարթև (29.9.348 - 7.9.439)

387 թուին, 39 տարեկան հասակին Հայոց կաթողիկոս ձեռնադրուած այս հոգեւորականին անունը մեր բոլորին ծանօթ է իբր հայ գիրերու գիտէն ետք, հայերէն լեզուի եւ Աստուածաշունչի պատուիրաններու տարածման աշխատանքին մէջ առաջնահերթ դեր խաղացած անձնաւորութիւն: Սուրբ Սահակ Պարթևի կաթողիկոսութեան օրերուն (387 - 439) էր որ Մեսրոպ Մաշտոց եկեղեցական դարձաւ եւ լծուեցաւ հայ գիրերու ստեղծման աշխատանքին: Ս. Սահակ Պարթև, Հայ գիրերու գիտէն ետք, տարիներ շարունակ զբաղած է հայրենիքի հոգեւոր կեանքի բարեկարգութեան վերաբերող հարցերով ու հիմնականապէս հայ դպրութեան ամենուրեք տարածումով:

Ս. Սահակ Պարթև ծնած է 348թ. Կեսարիոյ մէջ եւ ըլլալով Ս. Ներսէս Մեծի որդին, Ս. Գրիգոր Լուսաւորիչի տոհմէն է: Անոր միակ դուստրը Սահականոյշ, Քաջն Վարդան Մամիկոնեանի մայրն է:

Նախնական ուսումը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք, ան մեկնած է Բիւզանդիոն (Կ.Պոլիս) որ այդ ժամանակաշրջանին բարձրագոյն ուսման կեդրոններէն մէկն էր: Հոն, Սահակ պարթև տիրապետած է կրօնական, եկեղեցական եւ այլ գիտութիւններու, ինչպէս նաեւ բազմաթիւ օտար լեզուներու, որոնցմէ յունարէնի եւ պարսկերէնի:

Ս. Սահակ Պարթև կարգաւորած է Հայաստանեայց եկեղեցւոյ տօնացոյցը, գրած է բազմաթիւ հոգեւոր կանոններ (շարականներու շարքեր), եղանակաւորած է շարականներ, պատարագամատոյց եւ ծիսական աղօթքներ: Ս. Սահակ Պարթև եւ Ս. Մեսրոպ Մաշտոց իրենց աշակերտներուն հետ ծաւալած են թարգմանչական աշխատանքներ, որոնցմէ առաջինը հանդիսացած է Աստուածաշունչը: Այսպիսով Ս. Սահակ Պարթև նկատուած է մեր Ոսկեդարու կերտիչներէն մէկը:

Հայ եկեղեցին Ս. Սահակ Պարթևի յիշատակը կը տօնէ տարին 2 անգամ: Յիշատակի առաջին օրը Սուրբ Սարգիսի յաջորդող Շաբաթ օրն է, իսկ երկրորդը Հոգեգալստեան յաջորդող 4-րդ Կիրակի օրուան յաջորդող Հինգշաբթի օրը Ս. Մեսրոպ Մաշտոցի հետ:



Շարական՝ Ս. Սահակ Պարթևի հայրապետին

Դուն սուրբ հայրապետներուն արմատներէն մեզի գաւազան բխեցուցիր սուրբ Սահակ հայրապետը քու հօտդ հովուելու ո՛վ Քրիստոս:

Դուն հայերուսանգիտութեան խաւարը ջնջեցիր ասով իմաստութեան լոյսը ծագեցնելով Թորգոմի որդիներուն:

Դուն քու յառաջիկայ խորհուրդը տեսիլքով յայտնեցիր սուրբին, անոր յիշատակին ընդունէ տօնողներուս աղաչանքը:

Մեծ Պահքը ունի **7 Կիրակիներ**, որոնք յատուկ եւ իմաստալից անուններ ունին.

Ա. Բուն Բարեկենդան

Մեծ Պահքին նախորդող Կիրակին է. բարեկենդան կը նշանակէ բարի կեանք՝ աշխարհիկ իմաստով ուրախութիւն, խրախճանք, իսկ կրօնական իմաստով՝ երանելի կեանք, ինչպէս Ադամը կ'ապրէր դրախտին մէջ արտաքսուելէն առաջ:

Բ. Արտաքսման

Ադամն ու Եւան իրենց անհնազանդութեան պատճառաւ երկար չմնացին դրախտին մէջ եւ արտաքսուեցան հոնկէ: Մեզի՝ մեղաւորներու համար Քրիստոս ապաշխարութեամբ ցոյց տուաւ փրկութեան ճամբան, եւ դրախտին արժանանալու յոյսը:

Գ. Անառակին

Այս Կիրակին կը կրէ տուեալ օրուան ճաշու աւետարանի հատուածին անունը: Մեծ Պահքի ընթացքին մեր ուղեւորութիւնը կը նմանի Անառակ Որդիին ապաշխարութեան յաջորդող դէպի իր հօր տունը վերադարձին: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 15.11-32 ին մէջ:

Դ. Տնտեսին

Անառակի Կիրակին կը յաջորդէ Տնտեսի Կիրակին որ իր անունը կը ստանայ դարձեալ Յիսուսի խօսած առակներէն մէկէն: Այս առակը կը կարդանք Ղուկասի Աւետարանին 16.1-13 ին մէջ: Միջինքը տեղի կ'ունենայ այս Կիրակին յաջորդող Չորեքշաբթին:

Ե. Դատաւորին

Դարձեալ Յիսուսի առակներէն մէկէն կը ստանայ իր անունը, որ դատաւորի մը եւ յարատեւող այրիի մը առակն է, զոր կրնանք կարդալ Ղուկաս 18.1-8 ի մէջ:

Զ. Գալստեան Այս կիրակի օրուան առակը Քրիստոսի աշխարհ գալուն խորհուրդը կը բացատրէ: Այդ օրուան աւետարանական ընթերցումին վերջին համարը՝ Մատթէոս 23.39 Քրիստոսի Գալստեան կ'ակնարկէ:

Է. Ծաղկազարդ Այսպէս կը կոչուի Քրիստոսի փառաւոր մուտքը Երուսաղէմ, իր խաչելութիւնն ու յարութիւնը կանխող Մէկշաբթի օրը: Այդ օր մանուկները եկեղեցի կ'երթան զարդարուած մոմերով ու կը մասնակցին թափօրին:

Ա. Կիրակի՝ Բուն Բարեկենդան

ԵՂԵՄ Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը, ան ստեղծեց ծառերն ու ծաղիկները եւ աշխարհի բոլոր կենդանիները, ան ստեղծեց նաեւ Ադամն ու Եւան որոնք ուրախ կ'ապրէին դրախտի մէջ:



Սուրբ Թեոդորոս զօրավարը համաքրիստոնէական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ եկեղեցին կը տօնէ Մեծ պահքի առաջին շաբաթ օրը:

Ըստ վարքագիրներու ծնունդով Ամասիա քաղաքի Սարու գիւղէն էր, քրիստոնէայ բարեպաշտ ծնողներու զաւակ:

4-րդ դարու սկիզբէն Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, ապացուցելու համար կոռքերու հնարովի և կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռէա չաստուածուհիի մեհեանը: Այս արարքին համար բանտ կը նետուի և մեծագոյն չարչարանքներէն յետոյ 306թ. կը նահատակուի՝ այրուելով կրակի վրայ:

Սուրբ Թեոդորոս զօրավարը յայտնի է նաեւ որպէս «վիշապասպան», որ քաջութեամբ ու հաւատքով յաղթած է հսկայ վիշապի: Օտար եկեղեցիներուն մէջ յայտնի է նաև «Դիոն» անուամբ, որ յունարէն կը նշանակէ «նորեկ» զինուոր:

Կիլիկեան Հայաստանի Հռոմկլայի գաւառի Խալֆեթի աւանին մէջ կը գտնուէր Ս. Թեոդորոս եկեղեցին որուն մասին յիշատակութիւն կայ 1464 թուականի ձեռագիր յիշատակարանի մը մէջ:

Բ. Կիրակի՝ Արտաքսման

ԱՂԱՄԻ ԵՒ ԵՒԱՅԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ

Ադամ եւ Եւա Դրախտին մէջ ուրախ կ'ապրէին, Աստուած իրենց ամէն բան արտօնած էր ուտել, բացի իմաստութեան ծառի պտուղէն: Չար սատանան օձի կերպարանքով մօտեցաւ ու խաբեց Եւային ու Ադամին եւ անոնք կերան արգիլուած ծառի պտուղէն: Աստուած երբ իմացաւ շատ բարկացաւ եւ Ադամին ու Եւային արտաքսեց (դուրս դրաւ) դրախտէն:



Մանուկներու եւ պատանիներու 2026-ի Մեծ Պահքի օրացոյց



Փետրուար - Մարտ 2026						
Կիրակի	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
Փետրուար 15 Բուն Բարեկենդան	16 	17 	18 	19 	20 	21
22 	23 	24 	25 	26 	27 	28
Մարտ 1 	2 	3 	4 	5 	6 	7
8 	9 	10 	11 	12 	13 	14











Chips

Հեռատեսիլ
Համակարգիչ
Պատուար

Տուրմ

Կազային
խմիչքներ

Մանուկներու եւ պատանիներու 2026-ի Մեծ Պահքի օրացոյց

Մարտ - Ապրիլ 2026						
Կիրակի	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ	Շաբաթ
Մարտ 15 	16 	17 	18 	19 	20 	21 
22 	23 	24 	25 	26 	27 	
29 	30 	31 	Ապրիլ 1 	2 	3 	4 
5 	Ապրիլ'ս, յաջողեցար:					


Շաբաթ
Ծառն
Հաւկիթ

sundayschool.sh@gmail.com

Հայաստանեայց Եկեղեցւոյ Մօսթր Յակոբ Կիրակներէն Դպրոց

www.sourphagop.org

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտեզի անկիւն



Յիսուսի տաճար ընծայումը
«Տեառնընդառաջ Փետրուար 14»

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկաս 2.22-32-ի

Տիրոջ, նուիրուի, աղանիի, տատրակ, Սիմոն, Սուրբ Հոգին, Օծեալը,
Յիսուսը, գոհարանեց

Յովսէփն ու Մարիամը մանուկը Երուսաղէմ տարին ----- ընծայելու
համար, որովհետեւ Տիրոջ Օրէնքին մէջ գրուած է. «Տիրոջ պէտք է -----
--- ամէն արու զաւակ, որ մօր առաջին զաւակն է». ինչպէս նաեւ Տիրոջ Օրէնքին
համաձայն զոհ մատուցանելու զոյգ մը ----- կամ ----- երկու
ձագ:

Այդ ժամանակ Երուսաղէմի մէջ ----- անունով մարդ մը կ'ապրէր:
Սիմոն արդար եւ աստուածավախ մարդ մըն էր, ----- իրեն հետ
էր եւ վստահեցուցած էր զինք՝ թէ Տիրոջ ----- չտեսած պիտի չմեռնէր:
Արդ, Սուրբ Հոգիէն առաջնորդուած՝ անիկա տաճար գնաց: Երբ ծնողքը մանուկ
----- տաճար բերին, որպէսզի կատարեն այն ինչ որ Օրէնքը կը
պահանջէր մանուկին համար, Սիմոն իր գիրկը առաւ փոքրիկը եւ -----
----- զԱստուած:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք
Փետրուար 10-ին.

- ա. Ս. Ղեւոնդեանց քահանաներուն
- բ. Ս. Թէոդորոս Զօրավարին
- գ. Ս. Վահան Գողթնացիին
- դ. Սուրբ Սարգիսին:

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք
Վարդանանցը.

- ա. Փետրուար 27
- բ. Փետրուար 8
- գ. Մարտ 3
- դ. Փետրուար 12:

3.- Այս տարի ե՞րբ է Բուն
Բարեկենդանը.

- ա. Մարտ 2
- բ. Փետրուար 27
- գ. Փետրուար 15
- դ. Փետրուար 19:

4.- Ո՞ր տարին տեղի ունեցաւ
Աւարայրի ճակատամարտը.

- ա. 1666
- բ. 405
- գ. 301
- դ. 451:

5.- Ո՞ր թուականին
նահատակուեցաւ Ղեւոնդ Երեցը.

- ա. 1666
- բ. 405
- գ. 454
- դ. 451:

6.- Վարդան Մամիկոնեանը
ո՞ր ճակատամարտին
նահատակուեցաւ.

- ա. Աւարայր
- բ. Սարդարապատ
- գ. Նուարսակ
- դ. Մանազկերտ:

7.- Յիսուս քանի՞ օրուայ էր երբ
առաջին անգամ Տաճար բերուեցաւ.

- ա. 10
- բ. 20
- գ. 30
- դ. 40:

8.- Բուն Բարեկենդանին յաջորդ օրը
ի՞նչ կը սկսի.

Մեծ ----:

9.- Վարդանանցը շաբթուան ո՞ր օրը
կ'ըլլայ.

- ա. Երկուշաբթի
- բ. Երեքշաբթի
- գ. Չորեքշաբթի
- դ. Հինգշաբթի:

10.- Հետեւեալներէն ո՞ր մէկը ճիշդ է.

- ա. Սպիտակ Վարդան
- բ. Ճերմակ Վարդան
- գ. Կարմիր Վարդան
- դ. Կանաչ Վարդան:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Ս. Ղեւոնդեանց քահանայիցն
տօնը այս տարի ե՞րբ կը տօնենք.

ա. Մարտ 3

բ. Փետրուար 6

գ. Մարտ 1

դ. Փետրուար 10:

6.- Ո՞ր տարին վախճանեցաւ Ս.
Սահակ Պարթեւ կաթողիկոսը:

ա. 348

բ. 439

գ. 405

դ. 451:

2.- Սուրբ Սարգիսէն քանի՞ օրեր ետք
Վարդանանց կը տօնենք.

ա. 7

բ. 16

գ. 12

դ. 24:

7.- Ո՞վ գրած է Վարդանանցի
նուիրում «Նորահրաշ ...»
շարականը.

Ս. -----:

3.- Ի՞նչ կը կոչուի Վարդանանցի
յաջորդող Կիրակին.

-----:

8.- Ո՞վ գրած է «Հաւատով
խոստովանիմ...»ը.

Ս. -----:

4.- Ո՞ր մարգարէն ձուկին փորին մէջ
3 օր ժապ:

ա. Յովսէան

բ. Եսայի

գ. Երեմիա

դ. Դանիէլ

9.- Հետեւեալներէն ո՞ր մէկը Յիսուսի
պատմած առակներէն չէ:

ա. Անառակին

բ. Տնտեսին

գ. Դատաւորին

դ. Գալստեան

5.- Ի՞նչ էր Ս. Սարգիսին տղուն
անունը:

ա. Մարտիրոս

բ. Ստեփանոս

գ. Յովհաննէս

դ. Սողոս

10.- Ո՞վ էր այն ծերունին որ
Տեառնընդառաջին գրկեց Յիսուսը.

Ս-----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Երկրորդականի անկիւն

1.- Թուէ՛ Ս. Ղեւոնդեանց
քահանայիցն տօնին մէջ
ընդգրկուող Կաթողիկոսին եւ երկու
եպիսկոպոսներուն անունները:
ա. ----- կաթողիկոս
բ. ----- եպիսկոպոս
գ. ----- եպիսկոպոս

2.- Ամբողջացո՛ւր Ս. Վարդան
Մամիկոնեանին խօսքը.
«Քանզի Հայր մեր զՍուրբ
----- գիտեմք եւ Մայր
գ----- Եկեղեցի
Կաթուղիկէ»:

3.- Թուէ՛ Նուարսակի դաշնագրին
հայոց երեք (3) հիմնական
պայմանները:
ա. Հայաստանի -----
բ. -----
ազատութիւն
գ. ----- վերացում

4.- Հետեւեալներէն ո՞ր մէկը
գիտական աստիճան մըն է:
ա. Քահանայ
բ. Աբեղայ
գ. Վարդապետ
դ. Եպիսկոպոս

5.- Թուէ՛ Հայաստանեայց Եկեղեցւոյ
Պատրիարքութիւնները.
ա. Ե-----
բ. Կ-----:

6.- Ո՞ր աւետարանին մէջ միայն
կարելի է կարդալ Տեառնընդառաջի
մասին.
ա. Մատթէոս
բ. Մարկոս
գ. Ղուկաս
դ. Յովհաննէս:

7.- Ամբողջացո՛ւր. տարուան ո՞ր
չորս օրերուն Ճաշու Աւետարան չի
կարդացուիր.
----- Պահքի
առաջին չորս օրերուն:

8.- Երբ աշխարհի ամենէն երկար
ճոպանուղին (téléphérique) նստիս
ո՞ր վանքը կը հասնիս:

9.- Ո՞ր «փոքր» մարգարէն 3 օր կէտ
ձուկին փորին մէջ փսաց.
ա. Յովէլ
բ. Յովսան
գ. Նաւում
դ. Ամբակում:

10.- Հայերուն մօտ, ո՞վ է սիրոյ
երազանքը իրականացնող սուրբը:
Սուրբ -----

Լուրեր Կիրակնօրեայէն

Երկուշաբթի՝ 5 Յունուար 2026: Ս. Ծննդեան Ճրագալոյցի ընթերցուածները կարդացին Ս. Յակոբ Կիրակնօրեայի աշակերտ-աշակերտուհիները: Նոր տարուան եւ Սբ. Ծննդեան դադարէ ետք Յունուար 11ին Կիրակնօրեայ Դպրոցը վերսկսաւ իր սովորական գործունէութեան՝ ամէն Կիրակի ժամը 10:30_13:00: Յունուար 18-ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը: Յունուար 25ին Կիրակնօրեայ Դպրոցը շարունակեց իր սովորական գործունէութիւնը, լսարանային, դասարանային եւ երգեցողութեան պահերով:







ՄՈՒՐԱ ՅԱԿՈԲ
Առաքնորդանիս Մայր Եկեղեցի



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ

**Մանուկները Աստուծոյ
Նուիրելու Տօն**
Նախատօնակ
Ուրբաթ, 13 Փետրուար 2026
Երեկոյեան ժամերգութիւն՝ ժամը 6.30-ին
ապա՝ մանուկներու նուիրում եւ մոմաւառութիւն



Ամեն օր Վարդանանց է

Սփիւռքի տարածքին ապրող բոլոր հայերուն համար ամեն օր Վարդանանց պէտք է ըլլայ, եթէ հայապահպանումի պատերազմին ընթացքին մեր դիմագրաւած դժուարութիւններուն յաղթելու յոյսը վառ կ'ուզենք պահել:

Իւրաքանչիւր օրուան ծագող արեւուն հետ «Ճերմակ ջարդ»ի սուրն է որ կը ճօճուի, քիչ մը եւս օտարացնելով բոլոր անոնք որոնք օրէ օր կը նուազեցնեն իրենց դիմադրականութիւնը եւ կը նօսրացնեն իրենց հայկականութիւնը, համակերպելով օտարութեան պայմաններուն:

Թշնամիին միջոցներն ու կարողութիւնները մեր ունեցած միջոցներուն ու կարողութիւններուն բազմապատիկն են: Մեր շարքերուն մէջ «Վասակեան» ըմբռնումի հաւատացողներուն թիւը տարուէ տարի կ'աճի: Այս բոլորին մէջ սակայն, մեր ռազմավարութիւնը պէտք է մնայ Վարդանանց շունչով սերմանուած, որպէսզի այս մաշունի պատերազմը մենք հասցնենք Վահանեանց յաղթական եզրափակումին: Ահաւասիկ այս ռազմավարութեան հիմնաքարերը.

1. ՉՁԻՉԻԼ

Նկարագրի տէր անձ մը պէտք է գիտնայ թէ ե՞րբ պէտք է հաստատ կենայ իր կեցուածքին վրայ ու որոշէ ամէն գնով իր սկզբունքը եւ գաղափարը պաշտպանել: Ահա այդ ըրաւ Վարդան Մամիկոնեան ու մերժեց զիջիլ Քրիստոնէութենէն ըսելով «այս հաւատքէն մեզ ոչ ոք պիտի շէղէ»:

2. ՄԵՐԺԵԼ

Երբեմն մեզի պէս մտածող անձերուն թիւը քիչ կ'ըլլայ, իսկ հակառակորդներուն պէս մտածողներուն թիւը՝ շատ: Բայց թիւով մեծ խումբը կրնայ նոյնքան զօրաւոր չըլլալ, որովհետեւ նոյնքան համոզում կրնայ չունենալ եւ նոյնքան բուռն ձեռով կրնայ չհաւատալ իր գաղափարին: Ահա այսպէս է որ թէեւ հայ քրիստոնէաները թիւով նուազ էին պարսիկներէն, բայց իրենց հաւատքին մէջ աւելի զօրաւոր ըլլալով, մերժեցին ընդունիլ Յազկերտի առաջարկը:

3. ՀԱՄԲԵՐԵԼ

Վարդանի եւ իր 1036 ընկերներու նահատակումով սկսած պատերազմը աւարտեցաւ 33 տարիներ ետք իր եղբորորդի Վահան Մամիկոնեանի յաղթանակով եւ 484 թուականի Նուարսակի մէջ ստորագրուած դաշնագրով: Այս դաշնագրով պարսիկները կ'ընդունէին Հայոց պայմանները.

ա. Հայաստանի ինքնավարութիւն

բ. Քրիստոնէական պաշտամունքի ազատութիւն

գ. Ատրուշաններու վերացում:

Ահա այսօր, վարդանանցէն 1,575 տարիներ ետք, մենք որքա՞ն հաւատարիմ ենք քաջ Վարդանին եւ մենք ալ մեր կարգին

1. Հաստատ կը մնանք մեր Քրիստոնէական սկզբունքներուն վրայ

2. Հակառակ անոր որ մեր շուրջը շատ աւելի է թիւը անոնց որոնց հաւատամքը խոտոր է Հայ Քրիստոնէայ մեր սկզբունքներուն ու աւանդութիւններուն, եւ

3. Մենք այս բոլորին կը դիմադրենք համբերութեամբ եւ Քաջ Վարդանին պէս կ'ըսենք՝ Քանզի Հայր Մեր զՍուրբ Աւետարանն Գիտենք եւ Մայր զԱռաքելական Եկեղեցի Կաթուղիկէ:

Գիտէի՞ր թէ Աւարայրի ճակատամարտով սկսած Վարդանանց պատերազմը 33 տարիներ տեւեց եւ վերջացաւ Վարդանի եղբորորդի Վահան Մամիկոնեանի յաղթանակով եւ Նուարսակի դաշնագրի ստորագրումով 484 թուականին: